Մանկաբարձագինեկոլոգիական կադրերի պատրաստումը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում

Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի մանկաբարձության, գինեկոլոգիայի և կանանց վերարտադրողական առողջության ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ պրոֆ. Ռ.Ա. Աբրահամյան

375025 Երևան, Կորյունի 2

Հայաստանում մանկաբարձագինեկոլոգիական կադրերի պատրաստումը իրականացվում է 1925թ.-ից մանկաբարձության և գինեկոլոգիայի, իսկ 1990թ-ից սկսած նաև մանկաբարձության (պերինատոլոգիայի), գինեկոլոգիայի և կանանց վերարտադրողական առողջության ամբիոնների կողմից: Այս 2 ամբիոնների ջանքերով պատրաստվել են շուրջ 1000 մանկաբարձ-գինեկոլոգներ, որոնք հաջողությամբ աշխատում են ոչ միայն հանրապետության ծննդօգնության հիմնարկներում, այլև արտերկրում:

Մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնը ղեկավարել են՝Գ.Հ.Արեշյանը (1925-52թթ.), Բ.Գ. Սայադյանը (1952-53թթ. ժամանակավորապես), Ա.Մ.Ահարոնովը (1954-62թթ.), Բ.Գ.Սայադյանը (1963-70թթ.), Ս.Ա.Ալեքսանյանցը (1970-74թթ.), Կ.Բ.Ակունցը (1974-1999թթ.), Գ.Ա.Բեգլարյանը (1999թ. առ այսօր):

Ներկայումս գործող մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնից բացի, տարբեր ժամանակներում նույնանուն ամբիոններ են գոյություն ունեցել նաև ըստ առանձին ֆակուլտետների:

Սանիտարահիգիենիկ ֆակուլտետի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնը 1954-62թթ. ղեկավարել է Պ.Հ.Մարգարյանը, իսկ հետագայում՝ մանկաբուժական, սանիտարահիգիենիկ և ստոմատոլոգիական ֆակուլտետների նույնանուն ամբիոնը ղեկավարել է Ե.Ա.Մողնյանը, 1990թ.-ից՝ Ռ.Ա.Աբրահամյանը:

Մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի կողմից տարվող գիտական աշխատանքները նվիրված են եղել հղիության ընթացքի, ծննդաբերության և հետծննդյան շրջանի վրա մալարիայի ազդեցության, ծննդաբերության ցավազրկման, կանանց սեռական օրգանների ուռուցքների, ծննդօգնության կազմակերպման հարցերին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անտենատալ մահացության իջեցման գործում մեծ նշանակություն ունի վաղաժամ ծննդաբերությունների կանխումը և պայքարը տոքսոպլազմոզի, լիստերիոզի, բրուցելյոզի և այլ հիվանդությունների դեմ (Բ.Գ.Սայադյան): Մշակվել են կեսարյան հատման (Ա.Մ.Ահարոնով), մանկաբարձական աքցանների մանկաբարձական հայեցակետերը, նշվել ցուցումներ (Ս.Ա.Ալեքսանյան):

Ուշադրության արժանի աշխատանքներ են կատարվել նաև մանկաբարձական պրակտիկայում ցավազրկման վերաբերյալ, մշակվել է ծննդաբերության ցավազրկման դեղորայքային հատուկ եղանակ (Պ.Հ. Մարգարյան), բացահայտվել է փսիխոպրոֆիլակտիկայի, հիպնոթերապիայի և դեղորայքային ցավազրկման դերը մանկաբարձության և գինեկոլոգիայի մեջ:

Մշակվել է շնչահեղձության վիճակում գտնվող նորածինների վերակենդանացման մեթոդը (Ա.Մ.Ահարոնով), որոշակի տեղ է տրվել հետծննդյան վարակիչ հիվանդությունների ժամանակ վիտամինաբուժությանը (Ե.Ա.Մողնյան), իսկ հղիության ախտաբանության և ընդհատման վտանգի որոշ դեպքերում՝հորմոնաբուժությանը (Ի.Ա.Պետրովա): Մշակվել են հակաբիոտիկների ներորովայնային կիրառման միջոցով գինեկոլոգիական վիրահատությունների հետվիրահատական բարդությունների կանխման (Վ.Ա.Խաչատրյան), հետծննդյան շրջանի ֆիզիոլոգիայի և դաշտանային ֆունկցիայի վերականգնման (Օ.Բ.Սայադյան) և մանկաբարձագինեկոլոգիական օնկոլոգիայի (Ն.Ա.Այլամազյան), սեռական ֆունկցիայի ձևավորման վրա ուղեղի բնի տարբեր հատվածների ազդեցության, կնոջ օրգանիզմի սպեցիֆիկ ֆունկցիայի վրա պրոֆեսիոնալ ախտաբանության ազդեցության (Լ.Պ.Մարգարյան), նորածնային շրջանի ֆիզիոլոգիայի և ախտաբանության (Լ.Ա.Բալայան), կնոջ ռեպրոդուկտիվ համակարգի ֆիզիոլոգիայի և անպտղության ախտորոշման ու բուժման (Կ.Բ.Ակունց), պարբերական հիվանդության մանկաբարձա-գինեկոլոգիական հայեցակետերը (Գ. Պողոսյան), արտարգանդային հիվանդության հետևանքների (Ա. Խոնդկարյան), ծննդաբերական գործունեության խանգարումների (Ն. Շահվերդյան) ուսումնասիրմանը, էնդոմետրիումի հիպերպլաստիկ պրոցեսների ախտորոշման, բուժման և քաղցկեղի կանխարգելման (Գ.Ա. Բեգլարյան) գիտագործնական հայեցակետերը: Ամբիոնի աշխատակիցները հրատարակել են 14 դասագիրք և մենագրություններ, այդ թվում՝ Մ.Լ.Ռենիգեր-Արեշյանի «Հղիությունը և մալարիան» (1944), Պ.Հ. Մարգարյանի «Մանկաբարձություն» և «Գինեկոլոգիա» (1960) դասագրքերը, Ա.Մ.Ահարոնովի «Օպերատիվ մանկաբարձություն» (1961), Կ.Բ.Ակունցի «Գինեկոլոգիական հիվանդությունների հետազոտման ժամանակակից մեթոդները» (1980), «Կնոջ օրգանիզմի սպեցի-

ֆիկ ֆունկցիաների ֆիզիոլոգիական և ախտաբանական մի շարք հարցեր» (1982), Գ.Ա.Բեգլարյանի «Ուրոգենիտալ ինֆեկցիաների ժամանակակից ախտորոշման և բուժման սկզբունքները» (2000) և այլն:

Մանկաբարձության (պերինատոլոգիայի), գինեկոլոգիայի և կանանց վերարտադրողական առողջության ամբիոնը հիմնադրվել է 1990թ. որպես ՄՍՍ ֆակուլտետների մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոն, որը 1995թ. վերանվանվել է մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2, իսկ 2002թ.՝ մանկաբարձության (պերինատոլոգիայի), գինեկոլոգիայի և կանանց վերարտադրողական առողջության ամբիոն:

Հիմնադրման օրից առ այսօր ամբիոնի վարիչն է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ա. Աբրահամյանը, որը միաժամանակ ամբիոնի կլինիկական բազա հանդիսացող պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի կենտրոնի տնօրենն է: Վերջինս հանրապետության մանկաբարձագինեկոլոգիական 3-րդ մակարդակի ամենախոշոր նեղ մասնագիտացված կենտրոնն է, ունի 200 մահճակալ: Այն հանրապետության ծննդօգնության մյուս հիմնարկներին կազմմեթոդական, գիտաբուժական, ինչպես նաև անհետաձգելի բուժօգնություն տրամադրող և համակարգող բուժհաստատություն է:

Ուսումնամեթոդական աշխատանքներ.

Կիրառվում է գիտելիքների ստուգման թեստային համակարգը, մշակվել են ուսումնական նոր ծրագրեր միջազգային ստանդարտներին համապատասխան, ուսումնական պրոցես են ներմուծվել այնպիսի նոր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են հեռահաղորդակցական կապը, տեսա- և լսողական համակարգերը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաները: Ամբիոնը հագեցված է ուսումնական գործընթացը ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու համար անհրաժեշտ սարքավորումներով, նկարներով, դիդակտիկ և կլինիկական նյութերով: Այստեղ ուսուցանվում են Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների տեղաբնակ, արտասահմանցի ուսանողներ (հնդիկներ, արաբներ, պարսիկներ, հույներ, ռուսներ, ուկրաինացիներ, սիրիացիներ), կլինիկական օրդինատորներ, ստաժորներ, հանրապետության մանկաբարձագինեկոլոգներ:

Հրատարակվել են մայրենի լեզվով «Մանկաբարձություն», «Գինեկոլոգիա» և «Վերարտադրողական առողջություն» դասագրքերը, անգլերեն լեզվով ձեռնարկներ և մեթոդական գրականություն:

Գիտական հետազոտությունները վերաբերում են վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի հիմնախնդիրների ուսումնասիրմանը, նորագույն մոտեցումների և տեխնոլոգիաների փորձարկմանը, մշակմանն ու կատարելագործմանը: Վերջին 10 տարիներին ամբիոնի աշխատակիցները պաշտպանել են 6 թեկնածուական (Վ.Գյուլխասյան, Ա.Պողոսյան, Ա.Բլբուլյան, Լ. Աբրահամյան, Ա.Խուդավերդյան, Ռ.Գասպարյան) թեզ, նախապատրաստվում է պաշտպանության ևս 3 դոկտորական (Գ. Ավագյան, Լ.Աբրահամյան,Վ. Գյուլխասյան) և մեկ թեկնածուական թեզ (Կ. Անտոնյան):

Ամբիոնի դասախոսները վերապատրաստվել են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Իտալիայի, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի գիտական կենտրոններում, հանդես են եկել զեկուցումներով միջազգային համաժողովներում, կոնֆերանսներում և այլն:

Ամբիոնի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա համարյա բոլոր աշխատակիցները միաժամանակ հանդիսանում են կենտրոնի աշխատակիցներ և ուսումնագիտական աշխատանքը ներդաշնակորեն համատեղում են բուժական աշխատանքի հետ:

Ամբիոնի աշխատակիցներն իրենց մասնագիտական հմտությունները կատարելագործել ու կատարելագործում են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Իտալիայի, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի առաջնակարգ գիտական կենտրոններում: Զեկուցումներով հանդես են եկել բազմաթիվ հանրապետական և միջազգային գիտաժողովներում, հանդիպումներում և հավաքներում:

Կենտրոնը և ամբիոնը համագործակցում են մի շարք միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի բնակչության և մանկական հիմնադրամների, ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջազգային զարգացման գործակալությունների և այլ միջազգային ու տեղական կազմակերպությունների հետ:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են վերարտադրողական առողջությանը վերաբերող ազգային ծրագրերի մշակմանը և ներդրմանը, հետազոտությունների իրականացմանը, մասնավորապես՝

- Վերարտադրողական առողջության ազգային քաղաքականության մշակում
- Կանանց և երեխաների իրավիճակային վերլուծում (UNICEF, 1997թ.)
- Վերարտադրողական առողջության հետազոտում (WHO, UNFPA, 1997թ.)
- Կանանց և տղամարդկանց սեռական առողջության և չբերության ուսումնասիրում (UMCOR, 1998թ.)
- Վերարտադրողական առողջության ազգային ծրագրի մշակում և ներդրում (WHO UNFPA, 1997թ.)
- Պերինատալ բուժօգնության բարելավման ծրագրի մշակում (UNICEF, 1999թ.)
- Կանանց և երեխաների սնուցման իրավիճակի վերլուծություն (UNICEF, Հռոմի սննդի ինստիտուտ, 1998թ.)
- Առողջապահական ժողովրդագրական հետազոտություն (2000թ.)
- Մոր և մանկան առողջության պահպանման

ռազմավարության մշակում (2005-2015թթ.)

- «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրական իրավունքների մասին» ՀՀ օրենքի մշակում (2002թ.)
- Կանանց և տղամարդկանց վերարտադրողական առողջության ուսումնասիրում առանձին ռեգիոններում (PRIME -2, MSF, Mission East և այլն, (2003թ.)
- Հղիության արհեստական ընդհատման, վերարտադրողական օժանդակ մեթոդների, ներհիվանդանոցային վարակների կանխարգելմանը նվիրված նորմատիվ ակտերի մշակում (2004 թ.)
- Ստացիոնար և ամբուլատոր ծննդօգնության բուժհաստատությունների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերի ստեղծում
- Պետության կողմից երաշխավորված ամենամյա անվճար մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և ծառայությունների տրամադրման կարգի մշակում:

Գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունները.

- Վերարտադրողական առողջության արդիական նշանակություն ունեցող հիմնախնդիրների ուսումնասիրում, նորագույն մոտեցումների և տեխնոլոգիաների, այդ թվում էնդոսկոպիայի, դոպլերոֆլոումետրիայի փորձարկում, մշակում ու կատարելագործում (Վ.Գյուլխասյան, Լ. Աբրահամյան, Ա. Խուդավերդյան),
- Սեռական հասունացման ֆիզիոլոգիայի և ախտաբանության հարցեր (Ռ.Սարգսյան, Մ.Հարությունյան,Գ.Ավագյան),
- Հղիության ախտաբանության և գինեկոլոգիական որոշա խտաբանությունների ժամանակ կլինիկոիմունաբանական առանձնահատկությունների ուսումնասիրում, կանխորոշիչ միջոցների մշակում (Ա.Բլբուլյան, Ա.Պողոսյան),
- Անհետաձգելի գինեկոլոգիական հիվանդությունների ախտորոշման և բուժման ժամանակակից սկզբունքների մշակում (Ա.Աբրահամյան):

Վերջին տարիներին հրատարակվել է 4 դասագիրք, 6 ձեռնարկ, 3 մենագրություն.

- Պտղի զարգացման արատների մանկաբարձական հայեցակետերը, մենագրություն, 1991թ.
- Անհետաձգելի օգնության սկզբունքները գինեկոլոգիայում, 1994թ., ձեռնարկ բժիշկների համար
- Գինեկոլոգիա, դասագիրք, 1994թ.
- Մանկաբարձություն, դասագիրք, 1998թ.
- Ընտանիքի պլանավորում, ուղեցույց, 1998թ.
- Անհետաձգելի բուժօգնություն պերինատոլոգիայում, ուղեցույց, 1999թ.
- Էնդոսկոպիան գինեկոլոգիայում, մենագրություն, 1998թ.
- Արտաքին սեռական էնդոմետրիոզ, մենագրություն, 1998թ.
- Անտենատալ բուժօգնության հիմունքներ, ձեռնարկ, 2002թ.
- Անտենատալ բուժօգնության ուղեցույցներ, 2002 թ.
- Արտաթոքային տուբերկուլյոզ, ձեռնարկ 2002թ.
- Գիրք ծննդոց, ուղեցույց հղիների համար, 2002թ.
- Վերարտադրողական առողջություն (մանկաբարձություն և գինեկոլոգիա), դասագիրք, 2003թ.
- Վերարտադրողական առողջությանը վերաբերող շուրջ 300 գիտական հոդված և թեզիս, ինչպես հայրենական, այնպես էլ նախկին միութենական և միջազգային մամուլում՝ նվիրված պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի արդիական խնդիրների ուսումնասիրմանն ու լուծմանը:
- Մշակվել, փորձարկվել և գործնական առողջապահության մեջ ներդրվել են շուրջ 25 նորարարական առաջարկություն, 8 գյուտ և հայտնագործություն, 30 մեթոդական ցուցում, որոնք վերաբերում են մարդու վերարտադրողական համակարգի հիվանդությունների, պտղային բուժշրկության իմունաբանական, էնդոկրինոլոգիական, բժշկագենետիկական հիմնահարցերին:

Ներկայումս ամբիոնում աշխատում են դոցենտներ՝ Ռ.Սարգսյանը, Գ. Ավագյանը, Վ.Գյուլխասյանը, Ա.Պողոսյանը, Ա.Բլբուլյանը, ասիստենտներ Ն.Ղազարյանը, Ն.Հարությունյանը, Լ.Աբրահամյանը, Ա. Խուդավերդյանը, Հ.Գեղամյանը, Ա.Ջերջերյանը:

Ամբիոնի վարիչ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռ. Աբրահամյանը 1975թ. պաշտպանել է թեկնածուական, 1992թ. դոկտորական թեզը ՌԴ ԲԳԱ Մանկաբարձության, գինեկոլոգիայի և պերինատոլոգիայի ԳՀ կենտրոնում, ք. Մոսկվա, այնուհետև ստացել պրոֆեսորի կոչում:

Ռ. Աբրահամյանը Մխիթար Հերացու անվան, «Եվրամիություն XXI դար» նախագծի և «Մայրության խաչ XXI դարի ղեկավար» շքանշանակիր է և ՀՀ Նախագահի մրցանակակիր: 2002թ. նշանակվել է ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական՝ ծննդօգնության գծով և 1997թ.՝ ՀՀ ԱՆ գլխավոր մանկա-բարձ-գինեկոլոգ: Ունի շուրջ 350 գիտական աշխատանք, 80-ը՝ արտասահմանյան գիտական հանդեսներում: Անդամ է բժշկական համալսարանի գիտական, մասնագիտացված և մի շարք ամսագրերի խորհուրդների, արտերկրյա գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս է, ատենախոսությունների պաշտպանության խորհրդի, ինչպես նաև մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների հանրապետական ասոցիացիայի նախագահն է: